Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
սեպտեմբերի 14-ի N 1541-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

1. Սույն կարգը տարածվում է մեկուսացված համակարգում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (այսուհետ՝ ԳՁՕ) գործածության վրա:

2. Մեկուսացված համակարգում ԳՁՕ-ների գործածության ընթացքում իրականացվող անվտանգության միջոցառումները պետք է համապատասխանեն գիտության և տեխնիկայի ժամանակակից զարգացման մակարդակին՝ կիրառելով անհրաժեշտ առկա սարքեր և սարքավորումներ:

3. ԳՁՕ-ի գործածության նպատակով լիցենզավորված գիտահետազոտական, փորձացուցադրական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) պետք է ունենա համապատասխան մասնագիտական գիտելիքներ ունեցող կենսաանվտանգության համար պատասխանատու աշխատակից և գիտահետազոտական ծրագրի ղեկավար:

4. Կենսաանվտանգության համար պատասխանատու աշխատակիցը՝

1) ամենօրյա վերահսկողություն է իրականացնում մեկուսացված համակարգում ԳՁՕ-ի անվտանգ կիրառության նկատմամբ և ի հայտ եկած խնդիրների մասին տեղեկացնում է գիտահետազոտական ծրագրի ղեկավարին.

2) ապահովում է կենսաանվտանգության ապահովման նպատակով միջոցառումների մշակումը և դրանց իրականացումը:

5. Գիտահետազոտական ծրագրի ղեկավարը պետք է ունենա տվյալ ոլորտում նվազագույնը 3 տարվա աշխատանքային փորձ, որին նշանակում է գիտահետազոտական կազմակերպության ղեկավարը:

6. Գիտահետազոտական ծրագրի ղեկավարն ապահովում է աշխատանքների նախագծումը, իրականացումը և վերահսկողությունը:

7. Գիտահետազոտական ծրագրի ղեկավարի և կենսաանվտանգության համար պատասխանատու աշխատակցի պարտականությունները սահմանվում են գիտահետազոտական կազմակերպության ներքին կանոնակարգով:

8. Գիտահետազոտական ծրագրի ղեկավարը գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված աշխատակիցներին տեղեկացնում է անվտանգության միջոցառումների, ռիսկերի, դրանց վերացմանն ուղղված պարտադիր միջոցառումների իրականացման մասին և կրում է պատասխանատվություն աշխատանքների անվտանգության համար:

9. Գիտահետազոտական ծրագրի ղեկավարը գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված աշխատակիցներին կենսաանվտանգության անհրաժեշտությունից ելնելով՝ ներկայացնում է ԳՁՕ-ի անվանումը (գիտական և միջազգային), գենետիկական նյութի փոխանցման վերաբերյալ փաստերը, շրջակա միջավայրի և կենսաբազմազանության համար ԳՁՕ-ի ռիսկի գնահատականը:

10. Գիտահետազոտական ծրագրի ղեկավարը մեկուսացված համակարգում ԳՁՕ-ի օգտագործման պայմանների փոփոխության և դրա վերաբերյալ նոր տեղեկատվության ստացման արդյունքում՝ հնարավոր ռիսկերի առաջացման մասին անմիջապես պետք է տեղեկացնի լիազոր մարմնին:

11. Կազմակերպության լաբորատորիան պետք է հավատարմագրված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման կարգի համաձայն և համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1) ԳՁՕ-ի և ածանցյալ արտադրանքների շրջանակներում գիտական հետազոտությունների և տեխնոլոգիական նորարարությունների իրականացման համար համապատասխան սարքավորումների և մասնագիտական հաստիքների առկայություն.

2) կենսաանվտանգության պահպանմանը համապատասխան գիտահետազոտական գործընթացների իրականացում:

12. Շրջակա միջավայրի, կենսաբազմազանության և մարդու առողջության համար վտանգ ներկայացնող ԳՁՕ-ի չկարգավորվող ռիսկերի հայտնաբերման դեպքում կազմակերպությունը պետք է դադարեցնի փորձարկումներն ու անմիջապես կիրառի ռիսկերի գնահատում և անհրաժեշտության դեպքում՝ այդ ԳՁՕ-ի վերացման միջոցառումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ